Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԳԵՐԵՆԻԿ

„ՈՂ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ“

(Որպես մի պոեմ)

891.99
Դ-43

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրատարժ Տպարան «ՀԱՅՐԱՊԷՍ» ընկ.
Մադաթեան փող. № 15
(102)

19 NOV 2011

891.99
Դ-43
469

ԴԵՐԵՆԻԿ

„ՈՉ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ“

1001/599

Հայրենի գրադարան
Հ.Ս.Խ.Հ. Հայրենի գրադարան
Հ.Ս.Խ.Հ. Պետական Գրադարան
Պետական Գրադարան
7/II 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրատարժ Տպարան «ՀԵՐՄԻԱ» ԸՆԿ.
Մաղաքեան փող. № 15
(102)

0 2 MAR 2013

28065

Дозволено Цензурою 30 мая 1905 г. г. Тифлисъ.

ԻՐ

ՕՀԱՆՆԷՍԻՆ

ՀԵՂԻՆԱԿԸ

Հայկական Դպրոց
Էջմիածնի թաղ. (Երևան)

ՈՉ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ...

Ի՞նչ է մեր կեանքը—տխուր մի սև երգ՝
Երբեմն ուր միայն կայտառ մի հնչիւն
Շողում է յանկարծ այդ ողբի միջից՝
Եւ կորչում որպէս մի աստղ ժպտուն...

Եւ Նա՝ հիւսելիս աշխարքը հողէ
Որ սիրեց երկրի գեղեցիկն այնքան՝
Ա՜խ, նաև սրտով բարի էր գուցէ,
Որ իր կերտածին նայեց մի անգամ։—

Եւ անշուշտ վիշտը մեղմելու համար՝
Երբ Նա վշտերից էակն արձանեց՝
Ու երբ իմացաւ, որ շատ է թշուառ՝—
Խղճաց ու յետոյ երազն ուղարկեց...

I

Նա ինձ պատահեց տխուր մի իրիկուն
Ժպտուն աստղի պէս խաւար հոգուս դէմ.
Եւ երբ սրտայոյզ նայեցի թագուն՝
«Սա նա՞ է»—ասի, բայց ո՞վ,—չ՚գիտեմ...
Նա ինձ պատահեց այն մութ օրերում,
Երբ ինձ չորս կողմից մենութիւնն անճար
Նայում էր նայում՝ սոված ու տրտում՝
Ինչպէս չորս կողմից անանց սև անտառ։
Այն տխուր օրերն իրար ետևից
Անց էին կենում սրտէս հառաչով,
Ինչպէս յաւերժող մի մռայլ շիրմից
Քարւանը չէր տխուր հնչելով...
Անտարբեր, տարտամ անցել տարիներ՝
Մտել էի քուն գերեզմանային,
Ու սառ ձիւնի տակ թեքւած ծառի պէս՝
Յենուել էի ես դաւաճան մահին...

II

Բայց այն իրիկուն երբ տեսայ նրան՝
Զարթեցի յանկարծ իմ մռայլ քնից,

Տեսայ որ վաղուց մեռած եմ եղել,
Անցել են տարիք, ու ես չեմ տեսել...
Նայեցի նրան... ու ինչպէս մեռած
Վառ մանկութիւնդ տեսնիս դու յանկարծ՝
Կամ անուշ մի ձայն լսես այն կեանքից՝
«Սա այն էակն է» ասեցի ես ինձ։
Եւ սա՞, որ վսեմ սիրուն է այսպէս,—
Գուցէ՞ և սրտով բարի է ու հեզ...

Եւ քանի՞ անգամ թէ արթուն թէ քուն՝
Երերւել է սա երազող աչքիս,
Ու լուռ, մտերիմ՝ ինչպէս իրիկուն՝
Եկել է ինձ մօտ, անդորրել հոգիս...
Թէև չ՚գիտեմ անունը սրա՝
Ա՛խ ինչ է անուն,—մի ձայն է ունայն
Բայց գիտէի, որ ապրում է սա,
Թէև ոչ մի հեղ չեմ տեսել սրան...

III

«Դու ո՞վ ես, քուրիկ»—ասի մի անգամ.
«Ե՞ս—ճամբորդ աղջիկ» ասաւ ժպտադէմ.

«Արի՛ գիւղ գնանք» ասի ես նրան,
Գնանք քաղքից դուրս՝ շրջենք դէս ու դէն.
Կարօտ եմ, ասի ծաղկանց սուրոցին,
Եւ անտառների խո՛ր խո՛ր հոգոցին,
Ես տեղե՛ր գիտեմ մարդկանցից հեռու,
Ուր զօղանջում են ձայներն Աստծու
Ե՛կ քուրի՛կ գնանք.
Գնանք—ասաւ նա...
Եւ կէս գիշերի ջրի ձայնի պէս
Սիրո՛ւն էր ու ջինջ հնչմունքը նրա...

IV

Գարո՛ւն էր կարմիր մեր գարունն անցած՝
Որ սիրուն Լօռուն մենք հիւր գնացինք-
Եւ ինչպէս սիրո՛ւն բաներն են վաղանց՝
Նա էլ կարճ եղաւ՝ թէև գեղեցիկ...
Ա՛խ ինչքա՛ն իսկ որ չքնաղ էր Լօռին,
Այդ ծաղիկների հայրենիքն անդորը
Որ զողտրի՛կ, սիրուն նորհարսի նման
Նայում էր ամպէ շղարշի միջից...
Տեսանք վտակներ լուսեղէն, ծիծղո՛ւն,

Որ գեղում էին ժայռից երգի պէս,
Տեսանք անտառներ թախծալի խորհուն,
Ուր երգ էր հիւսում հաւքը բանաստեղծ...
Եւ երկինքն ինչպէ՞ս վճիտ էր ժպտում,
Ճխում արտուտը բերկրանքից գժւած,
Ախ ի՞նչպէս անհոգ երգում էր արտում
Ծղրիտն իր կեանքը ուրախ ու վաղանց...
Ա՛խ ժպտա՛ց Աստուած երբ հիւսեց Լօռին
Ու այդ ժպիտը մնա՛ց մինչ այսօր...
Եւ նրանից յետ դեռ մի երգ վերին
Լ՛ն անդորը երկրում զօղանջում է խոր։

V

Բայց ոչ գարո՛ւնը զողտրիկ Սանահնի,
Եւ ոչ էլ զմրուխտ գահե՛ր Լօռու,
Եւ ոչ ծաղկունքը պէս պէս գոյնանի՝
Սև տրտմութիւնս վանեցին հեռու...
Ու այս տրտմութեամբ Հաղպատ, Սանահին
Անցայ նրա հետ ինչպէս սև ստուէր,
Եւ տխո՛ւր էին անտառներն հին-հին՝
Ցրւած ու մոլոր՝ ինչպէս սև մտքեր.

Քանի որ մենք ջոկ սարերից ծագող՝
Երկու ջուր էինք իրար հանդիպած,
Ես մի գետ պղտոր՝ ափերից փախչող
Նա մի լոյս—վտակ ձիւներից սերած...

Բայց ա՜խ, ո՞ւր է էլ՝ այն ձայնը անհոգ,
Որ վճիտ աղբրի ծիծաղ էր կարծես,
Նա, որ կարկաչո՜ւմ, կարկաչո՜ւմ էր միշտ՝
Մերթ բարձր հնչուն, մերթ գլուղ ու հեզ...
Ա՜խ ո՞ւր է հիմի այն համերգն անդուլ,
Զրերի երգը բարձրիկ ու ազատ,
Ո՞ւր է անտառի փսփսոցն այն խուլ,
Երկնքի ժպտուն աչքերն անարատ...

Նրանք ա՜նց կացան մի հառաչի հետ,
Որ թռա՜ւ սրտէս մի օր այնուհետ...

VI

Վանքի բակից վեր՝ կար գահ մի կանաչ.
Գնացինք մի օր այնտեղ հանգչելու
Իրիկուն էր լուռ, երբ որ մեր առաջ

Մթնեց վեհ Լօռին ու ձորն ահարկու։
Հեռո՜ւն արևմուտ կողմում թախծալի,
Ուր թուխ ամպերում մեռել էր արև՝
Լուսանց էր բացած մէջ տեղն ամպերի՝—
Օդէ մի ճամբայ դէպ խո՞րքն յարատև։
Ու ես խորհեցի անձուկ կարօտով,
Թէ այդ է գուցէ ոսկէ ուղին
Դէպ անհունն, ուրտեղ անթառամ ժպտով՝
Ժպտում է կեանքը երջանիկ ասպին...
Եւ ինձ էլ յանկարծ թւաց մի վայրկեան
Թէ վերջին օրն եմ շրջելու մենակ,
Եւ այն աշխարքից եկել է մի հիւր
Ու ինձ պիտ տանի մի հեռու աշխարք...
Վանքից մի զանգակ օրհնում էր Լօռուն.
Իսկ մի շարական ոգի՞չ, սրտախո՞ր՝
Մանուելով վերև՝ գնո՞ւմ էր հեռուն
Տեսնելու Աստուածն իր մեծ, ահաւոր։
Այդ ձայնը այնպէս քաշում էր հոգիս,
Այնպէս ուզեցի ազատուել մարմնից
Ազատուե՛լ, գնա՛լ, հալուել նրա հետ,
Նա՛, որ մեկնում էր մռայլ աշխարհից...
Եւ երբոր հանգաւ ժխորը չորս դին՝

Եւ բացեց գիշերն իր իր ծածկոցը թուխ՝
Եւ երբ ընկուզի մի քնկոտ ոստին
Մնչաց ու քնեց թռչունը պանտուխտ,

Հնչեց հոգուս մէջ գաղտնախօս մի ձայն,
Ախորժ ու թեթև քան հովը լեռան,
Ե՜կ, ասում էր նա, ե՜կ եկ, իմ թշուառ,
Արի՛ քեզ տանիմ մի վերին աշխարհ,
Ցնդե՛մ, անհետե՛մ քո կեանքն երկրային,
Քեզ տամ ծտի՛ թև, թռի՛ր անդադար...
Է՜հ, ի՞նչ է աշխարք և ի՞նչ մեր այս կեանք,
Այսպէս պատահած մի ձև եղծելի,
Ուր զո՛ւր է արցունք և զո՛ւր ափսոսանք,
Ուր սէր, խնդութիւն ճարակ են մահի...
Եւ ներքը մարդուն, նրա խեղճ կեանքին,
Նրա անցաւոր վշտին ու փառքին,
Կերթայ, կանհետի՛ ամեն, ամեն բան՝
Ինչպէս ունայն ծուխ, ղողանջող մի ձայն...»

Յանկարծ օրօրւեց մի հով իրիկուան՝
Ու խոսքերն անուշ ցրւեցին, կորան...
Միայն լուութեան շշունջն էր գաղտնի
Փսփսում մի բառ անհասկանալի...

VII

Ո՞վ էր սա արդեօք՝
Այս խօսողն անհոգ,
Որ խօսեց այսպէս
Անհնչիւն, անտեսս...
Թէ՞ այն հայացքը, որ ինձ էր նայում
Վառե՛լ էր միտքս—այդպէ՞ս էր թւում...
Ես էլ նայեցի այն հեզ աչքերին
Որ այդպէ՞ս խօսել միայն գիտէին..,
Ու այդ նայելիս ինձ այնպէ՞ս անդորը
Ու խաղաղ թւաց աշխարքն ահաւոր...

Ա՜խ, այն բոպէին
Նրա վեհ դէմքին՝
Զկար կնութեան մի հետքը անգամ.—
Ո՜չ, քոյրութիւնը պճնանքն էր նրա
Սիրուն գաղտնիքը նրա թովչութեան...

VIII

Բայց եկաւ գիշեր, մենք բաժանուեցինք.
Գնայի՛ տրտում սենեակս մենիկ,

Սակայն նրա տեսքն ինչպէս ջինջ արև՝
Դեռ օրօրւում էր աչքերիս առջև.
Դեռ իմ ականջին թրթիռ էր հանում
Աննշան խօսքեր՝—բայց նրա խօսած,
Որից մի հիւանդ և յոյս կ'դնէր՝
Թէ կ'փարատւի իր ցաւը անանց...
Եւ մտերմութեան անհուն ծարաւով
Պտրել սկսայ պատկերը նրա...
Ա՛խ չէի հիւանդ այն անմիտ ցաւով,
Որ սէր են կոչում այս երկրի վրա...
Թէպէտ բիւր անգամ ես կրկնում էի
Անունը նրա քաղցր, գորովի՛,
Բայց զգացումս ջինջ էր, անարատ,—
Ոչ սին հիացում, ոչ սէր անհաստատ...

Բայց երբ որ քիչ-քիչ նօթերը կիտած
Նայել սկսան պատերս ինձ լուռ՝
Ցնդեցին ձայներն հոգուս պաշարած,
Եւ լռութիւնը շշնջաց տխուր...
Զգիտեմ ինչո՞ւ տխրեցի յանկարծ,
Եւ մրմնջացի նորից դառնացած.
Է՜հ, լռւռ կաց, սիրտ իմ, հերիք երազես,

Իզո՞ւր է ցնորքդ այդ սին ու անմիտ,
Ախ սա էլ կանցնի վշտերով այնպէս,
Ինչպէս որ անցան սէրերդ անժպիտ...
Սա կիրն է միայն, և սիրտ կանացի...
Է՜հ, լինչ ես պտրում ինչ 'իզուր է միշտ,
Ո՛ մի պատասխան սառ, հարևանցի
Կ'մարէ հոգուդ բուընկումն ընդմիշտ։

Բայց և մի վայրկեան ասում էի ես
Ինչո՞ւ եմ տանջւում ես անյոյս այսպէս.
Գուցէ՞ նա ճնայ...
Գուցէ հասկանայ...—

Ախ ո՞չ, նա կերթայ, նա չի՛ ճնալու։
Կերթայ իր համար քեզնից շատ հեռու,
Եւ երբէ՞ք, երբէ՞ք ինչքան կարօտես՝
Զպիտի նրան էլ «քուրիկ» ասես,
Զպիտի գիտնայ թէ ի՞նչ կար քո մէջ,
Նա պիտի երթայ ու ճնաս դու խեղճ.
Այսպէս է աշխարք, այսպէս են մարդիկ,
Այսպէս են եղել սրտերն ու հոգիք...
Աստուած իմ, Աստուած,
Գոչեցի յանկարծ,

Այս ինչ աշխարք է, այս ինչ սև դժոխք
Ի՞նչ կերկեր ձայներ, ճիչեր, հառաչանք,
Ի՞նչ կերպ-կերպ մարդիկ, Աստուած իմ անհոգ,
Ինչո՞ւ է հիւսել մեզ այսպէս մենակ...

Եւ նորից տխուր մահերգը կեանքիս
Եկաւ հառաչով ընդվզեց հոգիս,
Նորից մենութիւն՝ անսիրտ ու ծանօթ՝
Նորից իսկութիւն, տարտամ ու վշտոտ...

Ու մինչ այս վշտով մթնած էր հոգիս՝
Գթաց մի հեշտ քուն յոգնած իմ աչքիս.
Եւ ձայներ անվանգ, ձևեր երերուն՝
Խլեցին աչքէս աշխարքն ապարդիւն...
Մի վշտոտ երգի հնչիւնի նման՝
Թռան մտքերս հեռուն հանգչելու,
Փչեց իմ հոգուս մի շունչ վառ գարնան
Ու թեռ առայ ես ու թռայ հեռու...

IX

Երազ էր արդեօք, թէ արթուն և լուրջ,
Տեսիլ երերուն, որ սահում է լուռ,
Ներս մտաւ մի լոյս հանդարտ, անշշունչ,
Եւ ցոլեց ժպտով սենեակս տխուր...
Եկաւ, նստեց ու այնպէս մտերիմ
Նայեց աչքերիս հայեացքով բարի,
Որ այն աչքերում դեռ անդրադարձած՝
Ցոլում էր տեսքը եղեմայ երկրի։
Դեռ նրա դեմքից չէր ցրւել իսպառ՝
Երկնային լոյսի թաթախը պայծառ...

«Ես նա եմ» ասաւ «ինձ չե՞ս ճանաչում»,
Քեզ տես եմ եկել, սիրտդ ամոքեմ.
Քնով է աշխարք հիմի մեղմ շնչում,
Հոգիների ժամն հասել է արդէն.
Տեսար, թերհաւատ, ինչպէս եկայ ես,
Եւ ի՞նչ, ինձ երբէք չէիր սպասում.
Երբ ծաղկում էի ես նոր գարնան պէս,
Դու կոյր, վշտաբեկ ինձ չէիր տեսնում։

1001
599

Արի՜, իմ թշառ, արի՜ ժպտադէմ
Երթանք այլ աշխարհ, որպէս մի հնչիւն,
Թող մնայ երկրին երկրայինն ամէն
Զեղած հաւարիր վշտերդ ապարդիւն...

«Ախ ինչ թեթև են խօսքերըդ քաղցրիկ,
Այդպէս ոչ որ չէ կեանքումս ինձ ասել,
Բայց ա՛խ, ո՞ւր գաւ ես, թշառ եմ, քուրիկ,
Ցաւի հաւար է Աստուած ինձ հիւսել...
Իմ կեանքս խաւար, որպէս գերեզման՝
Չի կաթում այնտեղ արևի մի լոյս,
Մեկացած որպէս մի բու գիշերւան
Հիւանդ եմ, քուրիկ, հիւանդ եմ անյոյս...
Բայց նա այնպէս հեզ յանդիմանութեամբ
Հայեց աչքերիս ժպիտով գողտրիկ,
Իսկպէս կ'նայէր երկինքը անամպ՝
Երբ ամց է կացել արդէն փոթորիկ...

«Անցա՛ւ, ասաց նա, անցա՛ւ այդ քեզնից,
Անցա՛ւ, իմ թշառ, թող այդ վրդովմունք,
Երկրինն էր ինչոր պատմեցիր դու ինձ,
Սա այլ աշխարք է և այլ զգացմունք...

Ահա կ'փչեմ քեզնից կասկածանք,—
Կանցնի՜ երկրային վշտերդ ու սեր,
Ահա կտամ քեզ թոռչ, անրջանք,
Գնանք դէպ անհունն ու յաւէրժն ու վեր...

X

Թեթև՜ դառայ ես
Գարնան սիւգի պէս,
Որ ծաղկից ծաղիկ
Թռչում է մեղմիկ...
Ու սո՜ւր որպէս հնք՝
Դիւրին, սլացիկ,
Թռած իբրև երդ
Թռանք, գնացինք...
Սահուն, վերառաք
Մի աղօթք դառանք,
Մի վաղ ամկութիւն
Կայտառ ու ժպտուն...
Կապոյտ աչքի պէս
Ժպտում էր երկինք,
Ու մենք մեկուսի
Հեռու, միասին...

Ախ ինչ անուշ է թռչելն երազում
Սիրել, չիմանալ որ երազ է դա
Երբ մեղմ, կիսաքթուն սիրտդ է խոր յուզ-
ւում,
Ու չես մտածում, որ վերջ պիտի գայ...
Տարած, գորոված՝ չ'գիտեմ ինչպէս՝
Աչքերին էի մարել համբոյրով...
Բայց այնպէս յանկարծ ծիծաղեց ընկերս
Հոգու լիաշունչ, վճիտ ծիծաղով...
Դու համբուրում ես, ասաւ ժպտալի
Ախ թող երկրինը, նա անցաւ, անցաւ,
Համբուրում է նա, ով պիտի մեռնի,
Որ սիրով գոնէ կեանք տեսնի սակաւ։
Բայց ինչ տարակոյս մեր մտերմութեան,
Որ վեր է կեանքից և մահից այն կողմ,
Օ այնտեղ միայ երկիւղը մահուան
Այնտեղ, աշխարքում ունայն անողորմ։
Թող, ինչ է սէրը մարդկային, խեղճիկ,—
Մի ցող մայիսեան վաղ առաւօտի,
Ժպտում է մի պահ շողով աշխարհիկ
Որ յետոյ անհետ արևում ցնդի։
Եւ ինչ են արդեօք համբոյրներն անզօր—

Օ՜ սրտապատիր բառեր եղծելի,
Որ գրւում են լոկ աւազի վրան,
Որին ջնջում է ալիքը ծովի...
Ախ այն աշխարքը տանջանք էր 'իզուր,
Այնտեղ սէր ու խինդ թոյն էր, կարճատև՜,
Եւ գեղեցկութեան կորուստն էր տխուր
Ու մահն էր կանգնած ցնծութեան ետև...
Եւ այնտեղ միայ մեր մարմինն հոգէ...
Քոնը սենեակում այն լռւռ, տխրալի,
Իմը պատերում այն սառ, ձանձրալի,
Որոնց և մի օր քամին կ'շաղէ...
Օ մի ափսոսար մի բուռ այդ հողին.
Ի՞նչ էր մարմինը,—բեռ հոգու համար,
Որ մինչ ընկնելը մահու անկողին՝
Դեռ ինչքան իզուր պիտ տանջւէր ու լար։
Նա որ դաւաճան, ստոր, անհաստատ՝
Ծնւում գեղեցիկ, մեռնում էր հիւանդ,—
Ինչ վտանգի մէջ չնչին իրաւ
Այդ ծանր հոգը միշտ նիւթի ծարաւ։
Եւ նա էր միայն ստորը մեր մէջ,
Նա էր ագահը ոսկուն ու փառքին,
Ընկերին զրկող, նախանձողն անվերջ,

Եւ հացի համար կուող մոլեգին...
Այսօր ժպտադէմ—վաղը սգաւոր,
Մի օր սիրալի, բայց վաղը ատող,
Հիմա ընկերով—վերջը մենաւոր,—
Այս էր մեր մարմնի կեանքը երերող.
Դէ էլ մի յիշիր ինչ անցաւ, գնաց,
Նա մի երազ էր տխուր ու վաղանց..

Եւ այն, որին մենք ասում էինք կեանք
Եւ այն, որի խեղճ անունն էր աշխարք,
Թող մնա այնտեղ լոկ որպէս մի յուշ,
Որպէս փարատուած մի տխուր մշուշ...

Եւ ինչքան թովիչ, հնչուն էր ինչքան
Եդեմի լեզուն նորալուր, օտար,
Այն թեթևաշունչ բառերը անձայն,
Անհասկանալի երկրացու համար։
Եւ քանի խօսեց ընկերս աննիւթ՝
Այնքան աշխարքը մնաց ետ, մեր տակ,
Եւ մնաց որպէս հեռաւոր ու մութ
Մի յիշողութիւն, վաղուցայ տանջանք...

———

XI

Թևին տւինք մենք, թռանք, գնացինք
Հեռուն ծաւալուած կապոյտն այն պայծառ,
Որ հազար աստղի ժպտով գեղեցիկ
Զարթ լոյսերով ծաղկած էր ու վառ։
Եւ բարձրում էին յորդ աղբիւրի պէս
Արև ու աստղեր վճիտ ցայտերով,
Որ առատն Աստուած շաղել էր չորս դին՝
Որպէս ադամանդ լայն լայն թափերով։
Եւ կարծես խորհրդոն մոռացման միջում
Հեռուն ու հեռուն բուրմունքի նման՝
Լողում էր մի երգ արծաթահնչիւն
Աղբրի երգի պէս լռիկ գիշերուան...
Եւ երգում էին
Աշխարքի մասին։—

Այնտեղ տխուր աշխարքի մէջ՝
Վաղանցումը մեր մարմնական՝
Մաքրում է միշտ կեանքերը խեղճ,
Կեանքերն հողէ, կրոյր և ունայն։

Այնտեղ մարդիկ մանրակրկիտ
Խեղճ կրքերովն իրանց ունայն
Վարում են կեանք անցուկ անմիտ
Եւ անհետում խոտի նման։

Սակայն երբէք մարմինն ունայն
Չի մեռցընում հոգուն աննինջ,
Նա տունն է լոկ անցողական
Հոգու համար՝ յաւէրժ ու ջինջ։

Եվ քաղցր է միշտ մահը մարմնի,
Որ աշխարհի աղտի միջից՝
Մութ անկիւնից նկուղների՝
Ազատում է հոգուն անբիծ...

Այդպէս երկար երգում էին
Անհուշ երգը այդ երկնային,
Եւ ինչպէս նոր ալիք հեռուից՝
Գալիս էր ու լցւում նորից—

Ողջոյն քեզ, Աստուած, խորհուրդ ահաւոր,
Որ բաց արիր մեզ անհունդ այս խոր,

Դու, որ ցաւ տուիր և առար նորից.
Որ փարատեցիր մեզ մեր կոյր մարմնից։

Այսպէս երգելով խմբերն երգասաց՝
Իրենց երգի հետ խոր-երկնասլաց
Անհետում էին հեռուն ու հեռուն՝
Դէպի յաւէրժող Աստուածը անհուն։

XII

Եւ գեղեցիկ էր այն աշխարհն անհուն,
Հրաժիններով այն վայրը կապոյտ,
Այն խոր հոգեկան աշխարքը ժպտուն
Ուր ազատ էինք որպէս միտք անքոյթ։
Եւ տուն չունէինք մեր Աստծու նման
Մեր օթեանը թռիչն էր արագ
Եւ բառեր էին նուրբը, եդեմական
Մեր վճիտ կեանքի անունդը միակ։
Եւ չկար մեր մէջ՝ էլ տանջանք նիւթի
Ձունէինք ձանձրոյթ, բանտարկւել մի տեղ,
Ոչ սով մարմնական, զգացում ցրտի,
Եւ ոչ յոգնութեան տարտամ կար այնտեղ։

Թեթև՜ լոյսի պէս, աննիւթ, անարգել՝
Եւ աշխոյժ որպէս խորին ներշնչում,
Թափառում էինք աշխարքներն անվերջ
Ու կորչում գնում, որպէս նուրբ հնչիւն...

Եւ այն զգացումն երբեմն ունէինք,
Թէ ծովի ափով գնում ենք մենք լուռ,
Եւ ալիքները հեռում են մեղմիկ
Ափ գլորելով որպէս լոյս-փշուր...

Թւում էր յանկարծ՝ թէ հեռու հեռու
Կապոյտ աչքի պէս ժպտում է ահա
Ամպերի ճեղքից ծովիկը ուռնու,
Եւ մենք թռչում ենք վեր, նրա վրա...

Թւում էր յանկարծ՝ թէ քայլում էինք
Բարձրադիր գահին մի խորունկ ձորի,
Եւ լռութիւնից ցայտում էր մեղմիկ
Մի ձայն վտակի հնչուն, սրտալի՜...

Եւ զառիվայրին անվերջ ծաղիկներ,
Որ ժպտում էին արևին անբիծ...

Ցանկարծ մի կակաչ լուռ օրօրում էր,
Եւ մենք մտքի պէս թռչում այնտեղից

Եւ հեռուն հեռուն երկնի կապոյտում
Հնչում էր նուագ նուրբ, արծաթաձայն,
Եւ զօղանջելով դողում էր, կաթում
Լուսեղէն, ուրախ արցունքի նման,

Ու մի երգ որպէս բուրմունք ծաղիկի
Որ գարնան հովին մանուում է սահուն,
Ասում էր ինչ լաւ, ինչ լաւ է այստեղ,
Ինչ թեթև՜, անհիւն...

XIII

Բայց ո՞վ էր արդեօք ծանօթ բառերով՝
Մնչում էր զուարթ, ձայնով ցնծալի...
Կարծես Աստծու հետ թոթով խօսքերով
Մանուկն էր խօսում այնքան դուրալի։
Բացի աչքերս,—այդ հաւքն էր անդարդ,
Որ բաբիլոնի բերկրանքից զարթել,
Երգում էր ծառի ոստերում հանդարդ՝

Եւ թէ՞ էր առնում, ցանկանում ճախրել...
Բայց զուր էր այդքան երգով թովչալի
Պատմում ու գովում աշխարքն հողեղէն
Ոչինչ չունիր նա ինձ համար հիմի,
Օտար էի ես աշխարքից արդէն...

XIV

Եւ երբոր դժգոյն առաւօտի հետ՝
«Նա» եկաւ ինչպէս՝ հեզ խաղաղութիւն,
Ու երբ նայեցի նրան՝ զգացի,
Որ մեզ սպասում է մի քաղցր անջատում...
Եւ անդրբը էի խարոյկի նման,
Որի բոցերը ապրբուած արդէն,
Եւ դեռ հեզ մի կայծ ժպտում է վրան,
Որին նուրբ մի փառ պիտ անուշ ծածկէ...
Նայեցի նրա անդրբը աչքերին
Որ բաժին էին վշտի ու մահի...
Եւ մի շող գուցէ դողում էր այնտեղ,
Բայց այն էլ արդէն ո՛չ այս աշխարհի...

XV

Եւ անցան օրեր, մենք բաժանուեցինք,
Եւ բաժանուեցինք յաւէրժի համար...
Բայց սրտիս միջին երազը գողտրիկ
Դեռ մեղեդու պէս օրօրուեց երկար.
Երբեմն միայն
Եւ այն մարդկային թոյլ կամքից մղուած
Տեսնել ուզեցայ նրան ակամայ...
Գիտնալ բաղձացի թէ ուր նա գնաց,—
Եւ ինչ է անում, և ուր է հիմա...
Բայց զուր էի ես հոգիս բռնկում,—
Եւ ինչ կարող էր ասել ինձ մի կին՝
Որ վեհ էր այնքան մի վառ ցնորքում,
Բայց իսկութեան մէջ... էհ, մարդ է կրկին...

Բայց որը այս ողջն ուզելով այրել՝
Թեթև՞ բարկութեամբ միշտ մարդուն յատուկ՝
Գուցէ մի բոպէ գիտնայ և ներել
Որ մի սիրտ այսպէս երազեց գաղտուկ...
Է՞հ, քիչ է արդեօք պատահում և մեզ
Կարդալ մի շիրմի լուռ քարին գրած՝—

(Գուցէ մօր խօսքեր իր որդոցն ուղղած)
Թէ «վերջին օր կ'տեսնէ՛մ ես ձեզ»...
Ո՜, չկայ տեսնել այլ ես նրանց,—
Երգ է այդ լոկ, վառ պատրանք նորէն,
Բայց մենք կարդում ենք և ժպտում կամաց.
«Է՜հ, թող նրանք էլ երազով ապրեն»...

«Ազգային գրադարան»
NL0337332

28065